Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Օրինակելի ձև

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 22-06-2022 թ. որոշմամբ
«ՖԱՅԹԻՆԳ ԻՆՖԵՔ ԴԻՍԻԶ ԻՆ ԻՄԸՐՋ ՔԱՆԹ ԱՐՄ»
Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
հիմնադրամի 2021 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը		ՖԱՅԹԻՆԳ ԻՆՖԵՔ ԴԻՍԻԶ ԻՆ ԻՄԸՐՋ ՔԱՆԹ ԱՐՄ
1.2 Գտնվելու վայրը		ԵՐԵՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ Մարիոթ Արմենիա Հ. 312u
1.3 Պետական գրանցման համարը		222.160.01022
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		2008-10-22
1.5 ՀՎՀՀ-ն		02590813
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		+(374)91439598
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		www.fidec-online.org
1.8 Էլեկտրոնային փոստը		nhayrapetyan@fidec-online.org
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
ԴԱՆԻԵԼ ՍՏԱՄԲՈՒԼՅԱՆ		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
ԴԱՆԻԵԼ ՍՏԱՄԲՈՒԼՅԱՆ		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
ՆԱՐԻՆԵ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	5	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը	0	
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ	0	
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ստացված ֆինանսական միջոցների նպատակը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
	Իմունիզացիայի ազգային ծրագիր Մարդու Պապիլոմա Վիրուսի (ՄՊՎ) համաճարակաբանական հետազոտություններ	134,430,195
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
9. Հիմնադրի ներդրումը՝		

9.1 Դրամական միջոցներ	134,430,195	
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը
10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
10.1.3 Ֆիզիկական անձինք		
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
Իմունիզացիայի ազգային ծրագիր	74,659,881	
«Երկրորդ կարծիք» առողջապահական ծրագիր	185,235	
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	74,845,116	
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	74,845,116	

Նշումներ՝

Կից ներկայացվում է աուդիտորական եզրակացությունը՝ 6 թերթից:
թերթերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

HAKOBYAN ARTUR 2402700203

Подписано цифровой подписью: HAKOBYAN ARTUR 2402700203
Дата: 2022.08.16 16:15:08 +04'00'

«ԷՅՎԻՍԻ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ ԸՆԴ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ

ՀՀ , ք Երևան Նուբարաշեն, 10 փող, տուն 6
ՏԳՀ, Երևան, Մյասնիկյան պողոտա 5/1
Հեռ: (010) 57 28 46
ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ 048,
ՏՐՎԱԾ ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԵՎ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԿՈՂՄԻՑ -02.08.2006թ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ» ՀԿ ԱՆԴԱՄ,
ԳՐԱՆՑՄԱՆ ԱՄՍԱԹԻՎ՝ 2020Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29, ՀԳԳՀ՝ 1 20 0440

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ներկայացվում է «Ֆայթինգ ինֆեքշզ դիսիզիս ին իմըրջինգ քանթրիզ Արմենիա» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Ֆայթինգ ինֆեքշզ դիսիզիս ին իմըրջինգ քանթրիզ Արմենիա» հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2021թ., ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Հիմնադրամի ֆինանսական վիճակը 2021 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմք

Աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության՝ *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների միջազգային դաշնության պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրքի (ՀՄԴ-Վարքագիրք) և ՀՀ-ում կիրառելի ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող վարքագծի պահանջների, և պահպանել ենք վարքագծի նկատմամբ մեր մյուս պահանջները՝ այդ կանոնների համաձայն: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Հիմնադրամը լուծարելու կամ Հիմնադրամի գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն մենք՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում,
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Հիմնադրամի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար,
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը,
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների վերաբերյալ էական անորոշություն, որը կարող են նշանակալի կասկած հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Հիմնադրամին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը,
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը,

Այլ հարցերի հետ մեկտեղ, մենք հաղորդակցվում ենք կառավարման օղակներում գտնվող անձանց հետ աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Կառավարման օղակներում գտնվող անձանց նաև տրամադրում ենք հավաստիացում, որ պահպանել ենք անկախության վերաբերյալ էթիկայի պահանջները, ինչպես նաև նրանց տեղեկացնում ենք բոլոր հարաբերությունների կամ այլ հարցերի մասին, որոնք ըստ ողջամիտ ենթադրության, կարող են անդրադառնալ մեր անկախության վրա, և որտեղ կիրառելի է, անկախության պահպանմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ:

21 հունիսի 2022թ.

Գլխավոր տնօրեն՝ *Մեր Պետրոսյան*

Աուդիտոր՝ *Հռոմիկ Հանեսյան*

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
2021թ. դեկտեմբերի 31-ի ավարտված տարվա համար

Հազար ՀՀ դրամ	Ծանոթ	2021թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ դեկտեմբերի 31-ի դրությամբ
ԱԿՏԻՎ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	4	81	311
Ոչ նյութական ակտիվներ	5	-	-
Ոչ ընթացիկ հարկային ակտիվներ		-	-
Ոչ ընթացիկ ֆինանսական ներդրումներ		-	-
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		**81**	**311**
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	7	-	-
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	8	2 323	913
Դեբիտորական պարտքեր շահութահարկի գծով		-	-
Ընթացիկ ֆինանսական ներդրումներ	10	-	-
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	9	87 546	25 624
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		**89 869**	**26 537**
ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ		**89 950**	**26 848**
ԿԱՊԻՏԱԼ և ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Սեփական կապիտալ			
Չբաշխված շահույթ (չծածկված վնաս)		13 021	11 024
Պահուստային կապիտալ		-	-
Ընդամենը սեփական կապիտալ		**13 021**	**11 024**
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ		-	-
Հետաձգված հարկային պարտավորություններ		-	-
Ակտիվներին վերաբերող շնորհներ	10	81	311
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		**81**	**311**
Ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ		-	-
Պահուստներ աշխատավարձի եւ աշխատակիցների այլ կարճաժամկետ հատուցումների գծով	12	1 927	1 450
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	11	2 866	3 288
Շահութահարկի գծով պարտավորություններ	12	632	-
Եկամուտներին վերաբերող շնորհներ	10	71 423	10 775
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		**76 848**	**15 513**
ԸՆԴԱՄԵՆԸ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		**89 950**	**26 848**

Տնօրեն՝ Ա. Հայրապետյան

Գլխավոր հաշվապահ՝ Ա. Հակոբյան

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են և ստորագրվել են «Ֆայթինգ ինֆեքշզ դիսիզիս ին իմրոջինգ քանթրիզ Արմենիա» Հիմնադրամի ղեկավարության կողմից 2022թ. հունիսի 21-ին:

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող կից ծանոթագրությունների հետ մեկտեղ: (էջ 8-29)

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն 2021թ. դեկտեմբերի 31-ի ավարտված տարվա համար

Հազար ՀՀ դրամ	Ծանոթ	2021	2020
Հասույթ	13	25 692	30 077
Վաճառքի ինքնարժեք	13	(4 363)	(3 959)
Համախառն շահույթ (վնաս)		**21 329**	**26 118**
Իրացման ծախսեր	13	(15 375)	(17 053)
Վարչական ծախսեր	14	(3 042)	(5 488)
Գործառնական այլ եկամուտ	15	-	2
Շնորհներից եկամուտ	17	75 075	53 801
Գործառնական այլ ծախսեր	15	-	(722)
Շնորհների գծով ծրագրային ծախսեր	10	(72 850)	(53 801)
Շարունակվող գործունեությունից այլ օգուտ/(վնաս)	16	(2 225)	1 698
Զուտ շահույթ (վնաս) նախքան շահութահարկը		**2 912**	**4 555**
Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)	6	(513)	(709)
Շարունակվող գործունեությունից զուտ շահույթ (վնաս)		2 399	3 846
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		-	-
Ընդհանուր համապարփակ ֆինանսական արդյունք		2 399	3 846

Տնօրեն՝ Ն. Հայրապետյան

Գլխավոր հաշվապահ՝ Ա. Հակոբյան

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող կից ծանոթագրությունների հետ մեկտեղ: (էջ 8-29)

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն 2021թ դեկտեմբերի 31-ի ավարտված տարվա համար

Հազար ՀՀ դրամ	Համալրված բաժնետիրական կապիտալ	Էմիսիոն եկամուտ	Վերագնահատման պահուստ	Պահուստային կապի տալ	Չբաշխված շահույթ (չծածկված վնաս)	Ընդամենը
2020թ հունվարի 1-ի դրությամբ	-	-	-	-	**7 178**	**7 178**
Շարունակվող գործունեությունից զուտ շահույթ (վնաս)	-	-	-	-	**3 846**	**3 846**
Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխության ընդհանուր արդյունքը	-	-	-	-	-	-
Այլ համապարպակ ֆինանսական արդյունք	-	-	-	-		-
2020թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	-	-	-	**11 024**	**11 024**
Շարունակվող գործունեությունից զուտ շահույթ (վնաս)	-	-	-	-	**2 399**	**2 399**
Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխության ընդհանուր արդյունքը	-	-	-	-	-	-
Այլ համապարպակ ֆինանսական արդյունք	-	-	-	-	**(402)**	**(402)**
2021թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	-	-	-	13 021	13 021

Տնօրեն՝ Ն. Հայրապետյան

Գլխավոր հաշվապահ՝ Ա. Հակոբյան

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող կից ծանոթագրությունների հետ մեկտեղ: (էջ 8-29)

Դրամական միջոցների մասին հաշվետվություն
2021թ դեկտեմբերի 31-ի ավարտված տարվա համար

	2021	2020
Դրամական միջոցների տարեսկզբի մնացորդը	**25 624**	**21 676**
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հաճախորդներից ստացված դրամական միջոցներ	25 308	25 581
Ստացված դրամաշնորհներ	135 493	58 591
Այլ մուտքեր	4064	
Ապրանքների ձեռքբերումից, աշխատանքների, ծառայությունների ստացումից	(32 551)	(15 065)
Աշխատակիցներին վճարված դրամական միջոցներ	(45 733)	(49 651)
Այլ կրեդիտորներին վճարված դրամական միջոցներ		
Վճարված հարկեր և պարտադիր վճարներ, բացառությամբ շահութահարկի	(15 605)	(16 604)
Այլ վճարումներ	(6 829)	(182)
Վճարված շահութահարկ		
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	**64 147**	**2 670**
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ոչ ընթացիկ նյութական և ոչ նյութական ակտիվների վաճառքներից	-	-
Ոչ ընթացիկ նյութական և ոչ նյութական ակտիվների ձեռք բերման գծով		(420)
Ֆինանսական ակտիվներով գործառնություններից մուտքեր	-	-
Ֆինանսական ակտիվների ձեռք բերում	-	-
Ստացված տոկոսներ	-	-
Վճարված տոկոսներ	-	-
Այլ վճարումներ	-	-
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	-	**(420)**
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Սեփական կապիտալի գործիքների թողարկումից և վերավաճառքից մուտքեր	-	-
Ստացված վարկերից և փոխառություններից	-	-
Ստացված վարկերի և փոխառությունների մարումներ	-	-
Վճարված շահաբաժիններ	-	
Ստացված տոկոսներ	-	-
Վճարված տոկոսներ	-	-
Այլ վճարումներ	-	-
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	-	-
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ (նվազում)/աճ	**64 147**	**2 250**
Արտարժույթի փոխարժեքի փոփոխման ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	**(2 225)**	**1 698**
Դրամական միջոցների տարեվերջի մնացորդը	**87 546**	**25 624**

Տնօրեն՝ Ն. Հայրապետյան

Գլխավոր հաշվապահ՝ Ա. Հակոբյան

Դրամական միջոցների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող կից ծանոթագրությունների հետ մեկտեղ: (էջ 8-29)

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 12.08.2022 10:49